ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ

# Ուր է տանում ապգանվ.ան ծագմ՛ան թավ.ալգոր անիվ.ը

*նախագծային աշխատանք*

Լիա Բակունց, Լիլիա Մ՛ԻԽԱՅԵԱՆ, Գոռ Մ՛ԿՐՏՉՅԱՆ,
Մ՛ԱՐԻ Մ՛ԱՐՏԻՐՈՍՅԱՆ, ԷՐԻԿ ՇԱՀՈՒՆԿ

# ԼԻԱ ԲԱԿՈՒՆՑ

Ես Լիա Բակունցն եմ՝ արմատներով Վերիշեն գյուղից՝ Բակունցյան տոհմից: Ապրում և սովորում եմ Գորիս քաղաքում: Տարիներ շարունակ մենք ապրում ենք՝ չիմանալով մեր նախնիներին, նրանց պատմությունը և մեր արմատները:

Ես ևս, երկար մտածելուց հետո, որոշեցի գտնել իմ բարեկամներին և ծանոթանալ նրանց պատմությանը: Սակայն մինչ նրանց մասին խոսելը մի փոքր էլ՝ իմ գյուղի մասին…

Կապույտ երկնքից կախված վեհապանձ լեռներ…Նրանցով շրջապատված մի փոքրիկ հողակտոր ու այդ գողտրիկ հողում ծվարած մի ժողովուրդ՝ խրոխտ արծվի պես այդ լեռներից կախված:

Սա իմ գյուղն է՝ Վերիշենը սերնդեսերունդ փոխանցված ավանդույթներով ու սովորույթներով: Այն գտնվում է Սյունիքի մարզում, Գորիս քաղաքի հյուսիս-արևմուտյան մասում: 1870 թվականներից, երբ սկսվեց պլանավորվել Գորիս քաղաքը, սկզբում անվանում էին Ներքին շեն, իսկ քիչ վերևի գյուղը՝ Յերիշեն: Հողաբաժանումից հետո գյուղը անվանեցին Հին Գորիս, իսկ 1958թ.՝ Վերիշեն: Այսպես, այսօր գյուղը կոչվում է Վերիշեն:

Գյուղի միջով հոսում է Վերիշեն գետը, որը գալիս է հյուսիսից և սկիզբ է առնում Քոռ աղբյուրից: Գյուղից ներքև Վերիշեն գետը խառնվում է Ակներից եկող Մեծ գետին, այնուհետև կոչվում է Վարարակն, որը հոսում է Գորիս քաղաքով և թափվում է Որոտան գետի մեջ:

Գյուղը շրջապատված է բարձր լեռներով: Գյուղի դիմաց, դեպի հյուսիս-արևելք, գտնվում է հռչակավոր Պղնձաքար լեռը՝ իր նշանավոր քարանձավներով և անցյալի հետ կապված բազմաթիվ հիշողություններով: Կլիման բարեխառն է, չափավոր, խոնավ, ձմեռը համեմատաբար մեղմ, աշունը՝ տաք, երկարատև և հաճելի, ամառը՝ շատ զով և ոչ տաք:

Գյուղի բնակիչները չափազանց հյուրնկալ են և միշտ պատրաստ են պատմություններով և փորձառություններով կիսվել այցելող զբոսաշրջիկների հետ:

Այստեղ տիրում է նաև Բակունցյան ոգին…Ակսել Բակունց…. Սպարտակ Բակունց…

Մեծ հպարտություն եմ զգում՝ իմանալով, որ շարունակում եմ այս նշանավոր և խելացի ազգը: Տարօրինակ է, բայց ամեն անգամ թերթելով Բակունցականների ժողովածուները, մի տեսակ հոգիս խաղաղվում է, սիրտս թրթռում է մթնաձորյան թավուտ անտառների կուսական նրբությունից ու ես փակում եմ աչքերս, որ մենության ու լռության մեջ վայելեմ մեծ գրողների արարչագործությունները:

Բակունցյալ լռությունը…

Այն այնքան հոգեհարազատ է ինձ: Հաճախ ինձ թվում է, որ նրա լռությունը հյուսվել է իմ գյուղի անտառների քնքուշ պատկերներին: Ես հպարտ եմ այդպիսի մարդկանց ժառանգորդը և գործի շարունակողը լինելու համար, որովհետև իմ ազգի նախնիների պայքարը նաև իմ պայքարն է: Ես նաև համոզված եմ, որ Բակունցի ծիրանի փողը հնչեցնողներից մեկը նաև իմն է: Իմ հպարտությունը ծփում է հոգուս մեջ:

Սիրել՛ի Բակունցականներ, ես այնքան եմ սիրում ձեր լռությունը, որ այս պահին ուզում եմ կոչ անել մարդկությանը.

-Ապրե՛ք ու շնչե՛ք Բակունցականների ստեղծագործ ոգին, կերտե՛ք ու արարե՛ք, բայց մի խաթարեք այն լռությունը, որը կենսատու սաղմեր է սփռում աշխարհին:

***

Որտեղի՞ց է առաջացել իմ ազգանունը…

Ակսել Բակունցի հոր՝ Մինաս Բակունցի տոհմական մականունը Բեգունց էր, որից էլ առաջացել է Բակունց գրական անունը: Կա նաև մեկ այլ վարկած. Բակունցականների տոհմի հիմնադիր Բագին (մինչ այսօր չգիտենք՝ կին էր, թ՞ե տղամարդ) իր անվանումը ստացել է աղքատների նկատմամբ ցուցաբերած իր առատաձեռնության համար:

Մեր գերդաստանից ամենահայտնին Ակսել Բակունցն է: Ծնվել է 1899 թվականի հունիսի 13-ին, Գորիսում: Գորիսի ծխական դպրոցն ավարտելուց հետո Բակունցը 1910 թվականին ընդունվել է Էջմիածնի Գևորգյան ճեմարան, որի դասարանային բաժինն ավարտել է 1917 թվականին: Գնդակահարվել է 1937 թվականի հունիսի 8-ին Ստալինի ցուցումով:

Երբ ծնվել է Բակունցը, հոր ալեքսանդրապոլցի ընկերները ընծաներ են ուղարկել՝ հետն էլ խնդրելով, որ որդու անունը Ալեքսանդր դնի ի պատիվ իրենց քաղաքի: Գրողի հայրն այդպես էլ անում է: Սակայն Ալեքսանդր անունը կես ճանապարհին է մնում: Պատանեկան տարիներին Բակունցը խաղում է նորվեգացի դրամատուրգ Բյոռնստեռնե Բյոռնսոնի «Նորապսակները» պիեսի հերոսներից մեկի՝ Ակսելի դերը, և ընկերներն Ալեքսանդրի փոխարեն սկսում են նրան Ակսել կոչել այնքան ժամանակ, մինչև Ալեքսանդր անունը մոռացության է տրվում, և գրողն ընդունում է Ակսել անձնանունը:

Պապիկիս հայրը՝ Սեդրակ Բակունց, իր հարկի տակ շատ էր հյուրնկալում Ակսել Բակունցի եղբայրներին՝ Վահանին և Արտավազդին, քրոջը՝ Վարդանուշին և որդուն Սևադային՝ իրենց ընտանիքներով: Այդ հանդիպումներից պահպանվել են շատ լուսանկարներ, որոնցից մի քանիսը ունեմ ձեռքիս տակ: Դրանց հեղինակը Վահանն էր:

Զրույցների կենտրոնում իհարկե Ակսելն էր, նրա դաժան ճակատագիրը, դրա մեղավորները: Ճակատագրի հեգնանքով պապիկիս հայրը իր առաջին զավակներին՝ պապիկիս՝ Սուրեն Խաչատրյանին, քույրեր՝ Սուսաննա և Սվետլաննա Խաչատրյաններին, ճնշումների ներքո չէր տվել Բակունց ազգանունը: Այն կրում էին միայն նրանցից հետո ծնված պապիկիս կրտսեր եղբայրներ՝ Սպարտակ Բակունցն ու Արմիկ Բակունցը:

Նկարում պապիկս է: 17 տարի առաջ, երբ ես դեռ չէի ծնվել, նա մահացավ: Պապիկս մեր տան հպարտություն ու ոգեշնչման աղբյուրն է, մեր ուժն ու մեծությունը: Նա ծնվել է 1952թ. օգոստոսի 5-ին, Վերիշեն գյուղում: Գերազանցությամբ ավարտել է տեղի դպրոցը և եղել գյուղի առաջին Ոսկե մեդալակիրը: Այնուհետև կրթությունը շարունակել Երևանի Կ. Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտի «Ջերմագազամատակարարում և օդափոխություն» ֆակուլտետը: 1974թ. մինչև կյանքի վերջին օրերը աշխատել

է շինարարության ոլորտում: Իր անվան հետ են կապված Գորիս քաղաքում և գյուղերում կառուցված բազմաթիվ բնակելի թաղամասեր, շենքեր և շինություններ: Ամուսնացել է տատիկիս՝ Մարետա Սարգսյանի հետ: Ունեցել է 4 երեխա: Ցավոք, նրա ունեցած կարճ կյանքի պատճառով առիթ չեմ ունեցել տեսնել նրան և լսել նրա անգին խորհուրդները: Սակայն այնքան շատ պատմություններ եմ լսել նրա մասին, որ թվում է թե նրան տեսել և ճանաչում եմ:

Չեմ կարող չանրադառնալ պապիկիս եղբոր՝ Սպարտակ Բակունցին, ով ևս իր անմնացորդ ներդրումն է ունեցել հայ գրականության գոհարներում: Սակայն կյանքը նրա նկատմամբ ևս դաժան վարվեց…

**Սպարտակ Բակունցը** ծնվել է 1955թ. հունիսի 14-ին Գորիսի շրջանի Վերիշեն գյուղում: Գյուղի միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո սովորել է Երևանի Ժողովրդական տնտեսության ինստիտուտում: Աշխատել է Գորիսի գյուղվարչությունում՝ որպես գլխավոր տնտեսագետ: Զոհվել 1992 թվականին:

Ստեղծագործել է պատանեկան տարիներից, սակայն կենդանության օրոք չի տպագրվել: Միակ ժողովածուն՝ **«Հայացքների պայքար»** խորագրով, լույս է տեսել հետմահու՝ 1993-ին, եղբոր՝ Արմիկ Բակունցի շնորհիվ:

Նա իր որոնումները տարավ ճշմարիտ գրական աշխատություններով միտված դեպի կայուն ավանդույթները և անհատական դեմք ու դիմագիծ տվեց ասելիքին: Նրա ստեղծագործությունների խիզախումների ժամանակը անպայման կգար, եթե կյանքը այդպես ողբերգական չընդհատվեր…

Երկար ուսումնասիրության արդյունքում կարողացա կազմել իմ տոհմածառը, որտեղ ներկայացված են ոչ միայն տղաները, այնպես էլ աղջիկները: Ինչպես նշեցի՝ մեր տոհմի հիմնադիրը Բագին է, որից հետո հիշատակվում է Տոնին, Օհանը և Թևոսը: Թևոսն ունեցել է չորս տղա՝ Ավագը, Ստեփանը, Ավետիսը, Հայրապետը և երկու աղջիկ՝ Աննան ու Նազանը: Ստեփանը եղել է Ակսել Բակունցի հայրը, իսկ իմ ճյուղը սկսվում է Ավետիսից:

Ավետիսն ունեցել է վեց երեխա՝ Խաչատուրը, Մեսրոպը, Տիգրանը, Հովհաննեսը, Սոնան և Սաթենիկը: Հենց առաջինի անունով էլ հետագայում պապիկս ստացավ Խաչատրյան ազգանունը՝ ի պատիվ Խաչատուրի: Խաչատուրն ունեցել է երեք երեխա՝ Սեդրակը (պապիկիս հայրիկը), Հասմիկը, Հազարավարդ, իսկ պապիկս էլ ունեցել է երեք տղա, երկու աղջիկ: Պապիկս ունեցել է չորս երեխա՝ ավագ հերեղբայրս՝ Արման Բակունցը, կրտսեր հորեղբայրս՝ Դավիթ Բակունցը, հորաքույրս՝ Ռուզաննա Խաչատրյանը (ի դեպ հորաքույրս դեռ շարունակում է կրել պապիկիս երկրորդ ազգանունը) և հայրս՝ Նարեկ Բակունց: Արման Բակունցի երեխաներն են՝ Սուրենն (եղբայրս կրում է պապիկիս անունը) ու Մարին, Դավիթ Բակունցինը՝ Արփին ու Արենը, իսկ իմ ընտանիքում ես եմ և եղբայրներս՝ Արեգն ու Դանիելը:

Նախագծային աշխատանքիս նպատակն էր բացահայտել սեփական ընտանիքս, տոհմս, արմատներս, ընտանեկան ավանդույթներն ու ազգանվանս ստուգաբանությանը: Այսպիսով՝ աշխատանի արդյունքում ես էլ ավելին իմացա հեռավոր և մոտ ազգականներիս մասին, հիշողությունների շնորհիվ հայտնվեցի նախապապերիս ժամանակաշրջանում և գերագույն հաճույք

ստացա լսածս պատմություններից: Արդյունքում ինձ համար պարզ դարձավ թերևս մի բան… բավական հեռու և իմաստալից մի նոր աշխարհի ինձ տարավ ազգանվանս թավազլոր անիվը…



# ԼԻԼԻԱ ՄԻԽԱՅԵԼՅԱՆ

Ես՝ Լիլիա Միխայելյանն եմ: Ապրում և սովորում եմ Գորիսում: Վաղուց մեծ ցանկություն ունեի գրի առնել նախնիներիս պատմությունը, քանի որ ժամանակն անկառավարելի է և ամեն րոպե կարող եմ կորցնել ևս մեկ պատմություն լսելու, իմանալու հնարավորությունը: Այս նախագծային աշխատանքը լայն հնարավորություն էր ինքնամեկուսանալու, այդ ամենը գրի առնելու և ինձ համար նաև դրան մասնակիցը դարձնելու համար:

Ես արմատներով Խնձորեսկից եմ: Հին Խնձորեսկը գտնվում է արևմուտքից արևելք գրեթե 3 կմ երկարությամբ ձգվող լեռնահովտի աջ և ձախ լանջերին, որոնք, իրենց հերթին, կտրտված են խոր ձորահովիտներով: Ձորերը միմյանցից բաժանվում են լեռնաբազուկներով, որոնց լանջերին տեղ-տեղ վեր են խոյանում 100-120 մ բարձրության ժայռեր:

Խնձորեսկի պատմությունը հին է և հարուստ: Ինչպես գրված է խնձորեսկցի պատմիչ Ուսուբ-օղլու հուշագրությունում, գյուղի հիմնադիրներըեղել են երկու որսորդ եղբայրներ՝ Ջանաղան ու Թավարին: Նրանք, փախչելով պարսկական ջարդից, Նախիջևանից հասել են Զանգեզուր աշխարհի Որոտանի կիրճը, թաքնվել Հալիձորի անտառներում, և երբ խաղաղություն է հաստատվել, դուրս են եկել որսի: Ընկնելով մի եղնիկի ետեևից հասել են հին Խնձորեսկի ձորը: Խփելով եղնիկին, նրանք որոշել են եկեղեցի կառուցել և այդտեղ բնակություն հաստատել: Նրա տարածքում եղած մի շարք բնակատեղիներ, որոնք դեռևս չեն պեղված և ուսումնասիրված, գալիս են, հավանաբար, Սյունյաց աշխարհի սկզբնավորման շրջանից: Բուն Խնձորեսկում ամենահինը Չահլուկն է, որի պատմությունը հասնում է դարերի խորքը: Ըստ երևույթին, XIV-XV դդ. է վերաբերում համեմատաբար հարթ ու մատչելի վայրերում գտնվող կենտրոնական թաղերի սկզբնավորումը: Խնձորեսկի բնակիչները դարեր շարունակ հմտորեն օգտագործել են լեռնային բարդ տեղանքը, ինչպես բնակության ու աշխատանքի, այնպես էլ ինքնապաշտպանության համար:

Խնձորեսկը գործուն մասնակցություն է ունեցել ազատագրական այն պայքարին, որ Դավիթ Բեկի գլխավորությամբ ծավալվեց XVIII դարի 1-ին քառորդին Սյունիքում: Գյուղի բերդը 1728-1730 թթ. եղել է Մխիթար Սպարապետի զորակայանը: Ազատագրական շարժման պարտությունից օգտվելով՝ պարսիկ և օսմանցի բռնակալները սկսեցին հետապնդել ու հալածել հայերին:

Ըստ ժողովրդական ստուգաբանության, «Խնձորեսկ» անվան արմատը «խնձոր» բառն է: Մեկ այլ ստուգաբանությամբ՝ Խնձորեսկ նախապես անվանվել է Խորձոր կամ Խորձորեսկ, որը հետագայում որոշ հնչյունափոխության ենթարկվելով՝ ընդունել է ներկայիս ձևը: Երկու կարծիքներն էլ, անշուշտ, ընդունելի են. այդտեղ և՛ ձորերն են խոր, և՛ խնձորն է առատ:

Հին ու Նոր Խնձորեսկը միացված են ճոճվող կամրջով, որից երևում են Խնձորեսկի չորս եկեղեցիները:

Մեր ազգը տեղափոխվել է Հոռի Տափի գյուղից: Գյուղը վերացել է թևավոր օձերի պատճառով: Դա է պատճառը, որ նրանք տեղափոխվել են Խնձորեսկ: Ճատին և Բեգլար եղբայրները տեղափոխվել են Խնձորեսկ և իրենց համար ստեղծել են երկու ազգ՝ Ճատունց և Բեգլարյան:



Ճատունցից հետո մեր տոհմը շարունակում է Ավանեսը: Նա շատ բարի, համեստ, աշխատասեր մարդ էր: Նրա ընտանիքը այդքան էլ լավ չէր ապրում, սակայն իր աշխատասիրության շնորհիվ պահում էր իր ընտանիքը: Միխայելը՝ Ճատունցի թոռը, որի անունով էլ առաջացել է մեր ազգանունը եղել է հյուսն, որից էլ պահպանվել է գործիքներ և կարպետներ: Աշխատել է Խնձորեսկի Կոլխոզում, հետո տեղափոխվել է Գորիս: Պապիկս ասում էր, որ Ավանեսը շատ էր սիրում որսի գնալ: Նա մի անգամ եղնիկ էր բնել, որի գլուխը մշակվել և պահվել է մինչև օրս: Այն հիմա գտնվում է մեր տանը:

Միխայելը ունեցել է հինգ որդի՝ Վաղարշակը, Արտավազդը, Գառնիկը և Աշոտը: Իմ ճյուղը շարունակում է է Արտավազդը: Նա ծնվել է 1927 թվականին, Խնձորեսկ գյուղում: Սովորել է Խնձորեսկի միջնակարգ դպրոցում: 1941 թվականին մեկնել է Սովետական միության բանակ և ծառայել է մինչև 1949 թվականը: Ետ վերադառնալով գյուղ մեկ տարի աշխատել է գյուղի Կոլխոզում, հետո տեղափոխվել է Գորիս, հող գնել Չոփչին ձորում և տուն կառուցել, աշխատել անտառային տնտեսությունում՝ որպես տրակտորիստ: Աշխատել է ՍՈՒ 919-ում և մեքենամելորատիվ կայանում:

Արտավազդը ունեցել է չորս զավակ՝ Գյուլնարան, Վարդիթերը, Գևորգը և Գագիկը:

Նկարում պապիկս է՝ Գևորգ Միխայելյանը: Ծնվել է 1958 թվականին: Նա բարի ու աշխատասեր մարդ է: Պապիկս էլ ունեցել է երեք երեխա՝ Արմինեն, Դավիթը և հայրս՝ Արթուրը:

Մեր ճյուղի վերջին անդամները ես եմ, քույրս՝ Սոֆյան և եղբայրս՝ Գևորգը:

Նկարում տատիկս է՝ երիտասարդ ժամանակ:

Հայրս ծնվել է 1984 թվականին, Գորիսում: Նա շատ բարի գործեր ունի կատարած: Դրանց մեջ է մտնում Մաշտոցի 150 հասցեում գտնվող 4-րդ դարի սրբատեղին, որն ամբողջությամբ վերանորոգվել է և օծման արարողակարգով գրանցվել եկեղեցուն: Պապիկիս հետ միասին, հայրս վերանորոգել է դպրոց

տանող միակ փայտե կամուրջը և փոխարինել այն երկաթե կամրջով՝ արժանանալով քաղաքապետարանի շնորհակալագրին: Նա մասնակցել է նաև 2020 թվականի Արցախյան պատերազմին և միաժամանակ հյուրընկալել իր հյուրանոցում արցախահայությանը: Մասնակցել է նաև Սև լճի մարտերին:

Մեր գերդաստանից հայտնի է Բեգլարյան Սանասարը՝ պապիկիս հերեղբոր որդին, որը Արցախյան առաջին պատերազմի հերոս էր: Նրան շնորհել են ազգային հերոսի կոչում և Կուբաթլին գրավելուց հետո անվանել են նրա անունով՝ Սանասարավան:

Գիտեմ նաև, որ իմ նախնիները հին ժամանակներից մինչև հիմա զբաղվել են հողագործությամբ: Որոտանում ստեղծել են մեծ այգի՝ թթի ծառերով: Պապիկս պատմում էր, որ նրա մայրը ոչխարի բրդից թել էր մանում ճախարակի միջոցով: Այն մինչ այսօր պահպանվում է պապեկան տանը:

Ունենալով սահմանափակ տեղեկություններ, փորձեցել եմ կազմել տոհմածառս, որն ունի հետևյալ պատկերը:

Բոլորս էլ ունենք հիշողություններ՝ կապված հարազատ մարդկանց հետ, ովքեր ունեցել են իրենց կյանքի պատմությունն ու անցած ճանապարհը: Նախագծային աշխատանքը հնարավորություն ընձեռեց ինձ և իմ հարազատներին գնալ հեռավոր անցյալ, հասնել նախնիների արմատներին և որոշ չափով էլ ավելին իմանալ ազգանվան ծագումնաբանության մասին: Արդյունքում ես կարողացա անրադառնալ իմ արմատներին, իմ ծագմանը, որին երբևէ հայացք նետելու կարիք չեմ ունեցել: Սկսեցի լավ ճանաչել իմ գերդաստանի անդամներին, որտեղից ենք մենք սերել, ովքեր են եղել իմ ապուպապերը: Մի բան ակնհայտ էր…Մեզանից յուրաքանչյուրի պարտքն է ճանաչել և արժանապատիվ շարունակել նախնիների գործը…

# ԳՈՌ ՄԿՐՏՉՅԱՆ

Հայրենիքը մեծագույն արժեք է, իսկ հայրենասիրությունը՝ սրբազան զգացողություն: Հայրենասիրությունը մարդու արյան մեջ է և ուղեկցվում է նրան ողջ կյանքում: Եվ պատեհ առիթ է պետք, որպեսզի այն նորովի բնկվի՝ բոցավառելով սիրտ ու հոգի: Արմատների կանչը ոչ քիչ թվով է մարդիկ հայրենիք բերել: Չկա ավելի քաղցր զգացողություն, քան կանգնել այն հողին, որտեղ ծնվել, ապրել, պայքարել, մաքառել, կյանք ու կռիվ են տվել քո նախնիները: Ասում են՝ հայրենասիրությունը նաև նախնիների հիշատակը վառ պահելն ու նրանց գործը շարունակելն է: Աշխարհի որ անկյունն էլ ճակատագիրը նետած լինի, այդ սրբազան զգացողությունը քեզ Հայրենիք կբերի, որովհետև սաստիկ ուժեղ է արյան կանչը…

Այդ արյան կաչը իմ նախնիներին ևս հայրենիք բերեց…

Ես ևս իմ նախագծային աշխատանքի շրջանակներում ցանկանում էի իմանալ իմ ազգանվան ծագումնաբանությունը և գտնել իմ հեռու և մոտիկ բարեկամներին:

Իմ նախնիները գաղթել են Երուսաղեմից: Նրանք ոտքով կամ էշով հասել են Երուսաղեմ և հետ վերադարձել: Նրանց անվանել են մուղդուսիներ, այսինքն իրական գորիսեցիներ:

Իմ ազգանունը Մկրտչյան է: Այն իր տակ կրում է Մկրտիչ անունը: Մկրտիչը նաև իմ նախապապի անունն է, ում անունից էլ առաջացել է իմ ազգանունը: Մկրտիչ անունը ծագել է, «մկրտել» բառից:

Մկրտիչը ծնվել է 1863 թվականին: Նա եղել է անասնապահ և առհասարակ անասնապահությունից բացի ուրիշ գործով չի զբաղվել: Մահացել է 1928 թվականին: Պապիկս ասում է, որ նա ուներ մեկ որդի՝ Վարդանը: Վարդանը ծնվել է 1885 թվականին: Զբաղվել է անասնապահությամբ: Ունեցել է երեխա՝ չորս տղա և երկու աղջիկ՝ Վաղարշակը, Ռոզան, Սահակը, Հազարավարդը, Գառնիկը և Շահենը: Վաղարշակը զբաղվել է անասնապահությամբ, խոզի և տավարի կաշվից կարել է կոշիկներ, որոնք կոչվել են տրեխ: Անասնապահությամբ զբաղվելու ժամանակ, նրա մոտ առաջացել է հիվանդությունը, որը խորանալով պատճառ է դարձել մահվան: Սահակը եղել է անասնապահերի ղեկավար, իսկ Գառնիկը եղել է կալանավորների հսկիչ: Նրա մասին շատ տեղեկություններ չգիտենք: Գիտեմ, որ մասնակցել է 1943թ Երկրորդ համաշխարհային պատերազմի և մահացել պատերազմում: Նրանց եղբայր՝ Շահենը զբաղվել է շինարարությամբ որպես՝ պատշար:

Ես սերել եմ Վաղարշակից՝ ով զբաղվել է անասնապահությամբ: Նա ծնվել է 1908 թվականին: Ունեցել է ինը երեխա: Մահացել է 1973 թվականին: Վաղարշակի Արամայիս որդով էլ շարունակվել է մեր ճյուղը:

Նա ծնվել է 1936 թվականին: Արամայիսը երկար տարիներ աշխատել է արտադրական կոմբինատում՝ որպես հյուսն: Ունեցել է երեք զավակ՝ Ռոբերտը, Ալինան և պապս՝ Անատոլին: Մահացել է 2022 թվականին:

Նրա որդի Անատոլին՝ իմ պապը ծնվել է 1961թվականին: Նա անհատ ձեռնարկատեր է: Նկարում պապս է երիտասարդ տարիքում: Նա ծառայել է ռուսական բանակում: Հիմնականում ստուգում էր ինքնաթիռները մինչև թռիչքը, որից հետո դրանք կարող էին թռչել: Տատիկս էլ ծնվել է 1960 թվականին: Պապիս ունեցել է երեք տղա՝ Վաղինակը, Վահեն և հայրս՝ Կարենը: Հորեղբայրս ունի երկու որդի՝ Արտյոմն ու Տիգրանը, իսկ կրտսեր հորեղբայրս դեռ չի ամուսնացել: Իսկ ես ունեմ մեկ քույր՝ Լիլիթը:



Մեր տոհմում պահպանված ամենահին իրերից պահպանվել են շերեփները, որոնք հնում օգտագործել է Վաղարշակի քույր՝ Ռոզան: Այս շերեփները շատ խորհրդանշական են մեր տոհմի համար: Նաև այս շերեփները մինչ օրս պահվում են, սակայն չեն օգտագործվում այլ՝ պահվում են որպես խորհրդաիշ:

Ուսումնասիրելով մեր տոհմի արխիվը, ես ինձ համար գտա մի քանի հետաքրքիր նկարներ: Այստեղ պատկերված է իմ մեծ հորեղբայր՝ Վաղինակը: Նա ծնվել է 1984 թվականի փետրվարի 26-ին: Նրա անունը դրել են Վաղարշակի պատվին: Վաղինակը Վաղարշակի ժամանակից ձևն է: Այս նկարում նա 2 տարեկան է: Նկար 5-ում՝ հայրս է Կարենը: Նա ծնվել է 1985 թվականի դեկտեմբերի 8-ին: Նա նույնպես անհատ ձեռնարկատեր է, ինչպես պապիկս: Նկար 6-ում՝ պատկերված է փոքր հորեղբայրս՝ Վահեն: Նա ծնվել է 1990 թվականի հունվարի 7-ին:

Նախագծային աշխատանքի արդյունում ես կարողացա կազմել իմ տոհմածառը, որը ի սկզբանե չունեինք: Կարողացա գտնել հեռու և մոտիկ բարեկամներիս, և լինելով արժանի զավակ շարունակեցի պահպանել նրանց հիշատակն ու կատարած գործերը:



# ՄԱՐԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ



Տոհմը մի հասկացություն է, որը կարևոր է ցանկացած անձի համար: Այն ամենամեծ դերն ունի յուրաքանչյուրիս կյանքում, քանի որ առանց տոհմի անդամների մենք մեզ չենք կարող լիարժեք զգանք: Տոհմ ասելով ես պատկերացնում եմ ջերմություն, սեր և հոգատար բարեկամների…

Յուրաքանչյուր ազգ ունի իր ավանդույթները, որոնք փոխանցվում են ավագ սերնդից երիտասարդ սերնդին: Ավանդույթները, ծեսերը, սովորույթները, որոնք փոխանցվում են սերնդեսերունդ նպաստում են մեծերի նկատմամբ հարգանքին: Ամրապնդում են տոհմակիցների միջև բարեկամությունը: Առանց այդ ջերմության, տոհմի շատ համոզմունքներ և ուսմունքներ ուղղակի հեշտությամբ կորած կլինեն սերունդների միջով:

Ես ևս մեծ հետաքրքրությամբ և համակ ուշադրությամբ ուսումնասիրեցի իմ տոհմն ու ազգանվանս ծագումնաբանությունը և ինձ համար բացահայտեցի մի քանի արժեքավոր իրադարձություններ…

Ես կպատմեմ իմ նախնիների մասին՝ վերադառնալով արմատներիս, թե ովքեր են նրանք և որտեղից են եկել:

Երբ սկեցի նախագծային աշխատանքս՝ մտորումների մեջ հայտնվեցի: Չգիտեի ինչի և ում մասին գրել, որովհոտև տոհմիս մասին շատ քիչ բան գիտեի: Սկսեցի տոհմիս մեծերի հետ զրուցել: Ինչքան շատ էի լսում նրանց, այնքան ինձ համար նոր բացահայտումներ էի անում:

Ամենաշատ տեղեկությունները ես լսեցի պապիկիս քրոջից և հորեղբոր տղայից: Պարզվում է, որ նախապապերս Արցախից են: Նրանք Արցախի Բարդ գյուղից գաղթել են Իրանի Բերդ գյուղը: Տոհմի ամենամեծ անդամը՝ Մարկոս պապիկը, պատմում է, որ Բերդ գյուղի կողքին կար ինը հայկական գյուղ, որտեղ կային հայկական դպրոցներ: Ճիշտ է, դպրոցները ուսուցիչների կարիք ուներ, բայց կարողացավ մինչև վերջ հայկական պահվել:

Մեր տոհմածառի ամենամեծ անդամը Գասպարն էր: Նա աշուղ էր: Նրա երգերը երգել է նաև Սայաթ-Նովան: Գասպարին հաջորդել է Հարությունը: Նա արհեստագործ էր: Հարությունը ուներ որդի՝ Օհանջանը, որը շատ ունեւոր մարդ էր: Նա հիմնականում զբաղվում էր որսորդությամբ և մորթու առևտրով: Օհանջանի որդին՝ հայրիկիս պապիկը՝ Աշոտը հորից ժառանգել էր որսորդական զենքը: Աշոտը նույնպես զբաղբել է անասնապահությամբ:

Նրանք Իրանում ապրում էին բարեկեցիկ կյանքով և ասում են, որ Օհանջանը շատ ոսկիներ է ունեցել: Ցավոք տոհմի մեր ճյուղին ոչինչ չի հասել: Ասում են, նրա մահից հետո ոսկիները անհետացել են:

Հայրիկիս պապիկը իր ընտանիքով 1946 թվականին Հայաստանի կառավարության որոշմամբ ներգաղթել են Հայաստան: Մարկոս պապիկը, ասում է, որ Իրանի բոլոր հայերին Հայաստանում խոստացել էին ավել բարեկեցիկ կյանք: Հայաստան գալուց հետո հասկացել են, որ իրենց տխուր օրեր են սպասվում: Սկզբում տեղափոխվել են Խաչիկ գյուղ, իսկ հետո Գորիս գյուղ, իսկ վերջում տուն կառուցել Գորիսում: Դժվար օրեր են ունեցել, բայց Աշոտ պապիկի

աշխատասիրության շնորհիվ հաղթահարել են բոլոր դժվարությունները: Աշոտ պապիկը ունեցել է հինգ զավակ՝ Սերյոժան, Գրիշան, Ալվարդը, Նվարդը և Մայիսիկը: Մեր ճյուղը շարունակվում է Մայիսիկով:

Մայիսիկն ուներ երկու զավակ՝ Աշոտն ու Ռուզաննան: Ես մեր տոհմի յոթերորդ սերունդն եմ:

Իմ տոհմում կան տարբեր մասնագիտություններ ունեցող մարդիկ՝ արհեստավորներ, մանկավարժներ, տնտեսագետներ, բիզնեսմեններ, վարորդներ, ճարտարապետներ, պատմաբաններ, շինարարներ: Աշոտ պապիկի որսորդական զենն ել ժառանգել է հայրս:

Հետագայում ազգանունս ձևափոխվել և ստացել է Մարտիրոսյան անվանումը: Կարելի է ասել այն իմ իրական ազգանունը չէ: Դրա պատճառը պապիկիս տատիկի ամուսնությունն էր: Երբ մահացավ Օհանջանը, Սոնան ամուսնացավ մի տղամարդու հետ, ով կրում էր Մարտիրոսյան ազգանունը: Հետագայում Սոնան իր զավակներին տվեց Մարտիրոսյան ազգանունը: Այդպես ժամանակի սերունդներում իմ ազգանունը փոփոխության ենթարկվեց: Ընտանեկան նկարներից կարողացա գտնել մի քանիսը, իսկ մեր տոհմածառը ունի հետ նյալ պատկերը…

# ԷՐԻԿ ՇԱԼՈՒՆՑ

Երբևէ եղե՞լ եք Մատենադարանում կամ Հայաստանի պատմության թանգարանում: Եթե այո, ապա այնտեղ դուք տեսել եք հին ձեռագրեր, նկարներ, իրեր: Այդ ամենը մեզ պատմում է մեզանից շատ վաղ ապրած մարդկանց, անցյալում տեղի ունեցած իրադարձությունների, ստեղծված արժեքների մասին: Այդ ամենը մեր պատմությունն է: Պատմություն անվանում են ժողովրդի հիշողությունը: Այդ հիշողության շնորհիվ մենք այսօր գիտենք, թե ինչպես են ապրել մեր նախնիները, ինչո՞վ ենք մենք նրանց նման կամ ինչո՞վ ենք տարբերվում: Գիտենք նաև, թե ինչ են ստեղծել, արարել կամ ցավոք, կորուստներ ունեցել մեր նախնիները, ինչպե՞ս են պաշտպանել մեր հայրենիքը: Այդ ամենի մասին մեզ պատմում են մեր պատմիչների զրույցները, առասպելները, ավանդույթները, պահպանված իրերը՝ զարդերը, զենքերը, դրամները, տարբեր շինությունները:

Իմ կողմից ընտրված նախագծային աշխատանքը ևս ինձ ստիպեց ուսումնասիրել իմ նախնիներին՝ հատկապես իմ գերդաստանի պատմությունը: Ինձ այդ հարցում օգնեցին հին նկարները, տարբեր պատմությունները՝ լսած մեծահասակներից, պահպանված իրերը:

Հատկապես ուզում եմ շեշտել այն փաստը, որ վաղուց մեծ ցանկություն կար ուսումնասիրելու իմ տոհմածառն ու ազգանվանս ծագումնաբանությունը:

Ինչպես Բակունցն իր «Կյորես» պատմվածքում է ներկայացնում «երբ կյորեսեցուն հարցնում են, թե որ ազգից ես, նա տալիս է տոհմի անունը՝ Սվետունց, Շալունց, Բակունց …»

Հիմա Շալունց ազգի մասին մի փոքր: Տոհմասիրության ակունքը տոհմաճանաչությունն է: Շալունց ցեղը Գորիսի ամենահին ցեղերից մեկն է, որի արմատները գալով 1800-ական թվականներից, այսօր էլ պահանջում է իր գոյությունը: Հիմա այս մեծ գերդաստանից շատերը չկան, բայց և այնպես մնացածներս՝ ազգանունը շարունակողն ու կրողներս, սուրբ առաքելություն ունենք կատարել ու պահպանել մեր տոհմի բնորոշ հատկանիշներն ու արժանի լինել ժառանգորդ կոչվելուն:

Տոհմածառի այս պահի կազմությունը 1800-ական թվականներից է, իմ պապիկի խոսքերով և առհասարակ մեծերի պատմություններով գիտեմ, որ կոպիտ ժողովուրդ էին, զբաղվում էին անասնապահությամբ: Պապիկս պատմում էր շատ դրվագներ, երբեմն բառբարով դեպքեր, որոնք լսելով զարմանում եմ, բայց այդ ժամանակներում «դարն այդպիսին էր», այդպես էր պատասխանում:

Մեր տոհմի ամենահին ներկայացուցիչը Գալուստ Շարմաղն է: Նա ունեցել է վեց զավակ:

Վերջերս հայրիկիս հետ Տաթևի վանքում մի խաչքար գտանք, որի վրա գրված էր. «Շալունցին՝ 1892թվական»:




*Աշակերտների կողմից իրականացված հարցազրույցները կարող եք դիտել այստեղ*

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


| № | ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ | ԷՋ |
|---|---|---|
| 1 | Լիա Բակունց | 1 |
| 2 | Լիլիա Միխայելյան | 5 |
| 3 | Գոռ Մկրտչյան | 8 |
| 4 | Մարի Մարտիրոսյան | 11 |
| 5 | Էրիկ Շալունց | 13 |

# Ուր է տանում ապգանվանս ծագման բավալգուր անիվը


**Ղեկավարները**

Ռուսաննա Խաչատուրյան
Օսա Ղուլյան
Հռոմինե Ալավերդյան

**Աշակերտները**

Լիա Բակունց
Լիլիա Միխայելյան
Գոռ Մկրտչյան
Մարի Մարտիրոսյան
Էրիկ Ճաղունց